



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՅԺԲ, 1865 — ԻԱ ՏԱՐԻ — ԴԵԿՏԵՄԲԵՐ

29 ՆՈՅԵՄԲԵՐ 1393. ԼԵՒՈՆ ՎԵՐՁԻՆ

Ոչ դժ 'ի Հայազգեաց որ Բարիզու քով Ս. Դիոնեսիոսի արքայարանի տաճարին այց ելնէ և իջնէ անոր տապանատունը, կրրնայ առանց մեծ և խոր մտադրութեան տեսնել հոս դրուած պատկերիս իսկականը. որ է քնարան մը թագաւորի, թագիւն եւ խաչիւ, հանգերձ առիւծով և վահանաւ, յորում նշանք թագաւորութեան Հայոց և Երուսաղեմի և Լիւսինեան տան: Աչք մէկէն կու տեսնեն այս խորագիրս, *Cy gist Lyon, Roy d'Arménie.* (Աստ հանգչի Լեւոն թագաւոր Հայոց) . և դարձեալ *Cy gist le très-noble et excellent prince Lyon de Lizingne, quint Roy Latin du royaume d'Arménie, qui rendi l'âme à Dieu, à Paris le XXIX jour de novembre, l'an de grace M. CCC. XX et XIII.*

III Այսինքն. Աստ հանգչի մեծատոհմ և մեծապայծառ իշխան Լեոն Լիւսինեան, հինգերորդ արքայ Լատին թագաւորութեանն Հայոց, որ աւանդեաց զհոգին առ Աստուած, 'ի Բարիզ, 'ի 29ի աւուր

նոյեմբերի, յամի Փրկչին 1393. — Այս ուրուագիր տեսնուած փոքրիկ ' ծնօտածաղիկ անձն էր յաջորդ և վերջին հսկահասակ Հայկազանց և իշխանազօր Հայպետաց. և աւելի այս նկատմամբ քան թէ իր անուանակցաց մէջ յետին ըլլալուն համար՝ կու վայելէ իրեն կոչուին ՎԵՐՁԻՆ. իր անունն այլ ըստ իմաստին կրրնայինք կերպարանել ծեր Առիւծ մը վտտած թաթերը զինուց և վահանաց վրայ դրած և ընկած, բայց առիւծարար ընկած. որուն խորշոմեալ և կոնճեալ յօնքն ու կիսարաց աչերն ոչ անվախ նայեցընեն իրեն: — Լեոն Ե կամ Զ դասեալ 'ի կարգի Ռուբինեան պարոնաց և թագաւորաց Կիւլիկիոց Հայոց, վերջինն եղաւ 150ի չափ Հայպետաց կամ ազգապետաց Հայոց, որոց կէսն թագաւորական պատիւ և անուն այլ կրեցին, կէսն առանց այդ անուան և թագի՝ մեր ազգին գլխապետք եղան, կատարեալ 40 դարուց միջոց: Ազգաց

1 Թերևս փոքրկութեանն համար կամ գգուանոք Lyonet այլ կոչուէր 'ի Փռանկաց:

դեռ չձեռնացեալ կամ չծաղկեալ կոկոնակերպ նահապետաց հետ՝ երբ մեր նահապետն՝ Հայկն՝ ելաւ 'ի նոյարնակ երկրէն, ֆամայ բռնաւոր թոռան հետ երթալու 'ի Սենաար, յաբեթական գնդի մը գլուխ կեցած, հաւատարմագոյն ժամանակագրութեան թիւն էր 2625 տարի ֆրիստոսէ առաջ. երբ Լեոն Զ՝ ֆամայ ցեղին պայազատական աթոռոյն իշխող Եգիպտացի սուլտանին դէմ մինչեւ 'ի յետին հնարս կոռուելով 'ի վերայ թագաւորութեան և անուան Հայոց՝ գերի ընկաւ, և բազմութիւնք Հայոց թողեալ զյետին հայրենիս՝ օտարական գնացին յարևմուտս, ֆրիստոսի թուականն էր 1375. այս երկու թուոց դումարն կ'ընծայէ ողջ ամբողջ 4000 տարի: Զորս հազար տարի ազգի մը ինքնանուն և քիչ շատ ինքնիշխան պայազատութեան՝ 'ի մէջ հին և նոր ազգաց. — բաւական էր այդչափդ ազգի մը համար՝ 'ի չափս Նախախնամողին ազգաց և ազանց, որ մարդկան ստեղծմանէն մինչև ցայսօրս ձգուած ժամանակի մշտախաղաց կամարին մեծագոյն մասին վրայ լարած և շարած է Հայոց ազգապետութեան գիծն, որոյ հաւասար շատ քիչ ազգաց գիծք կ'երևին: Այն գիծն թերևս օտարաց համար աննշան և ազօտ է այսօր. բայց Հայ աչաց լուսանշոյլ և անջինջ գիծ մ'է. կարմիր—կանաչ կամար մը՝ որոյ գլուխն 'ի լեառն Մասիս, և վերջըն յամուրն Սիս. մէկուն քով Հայկն կանգնած, միւսոյն՝ Լեոն ընկած: Յառաջ քան զՀայկն դեռ ժողովրդոց զանազանութիւն չկայ, չկան ազգք և լեզուք. յետ Լեոնի ամենայն ազգք և իշխանութիւնք՝ դեռ երեկուան բաներ են յաչս Հայոյն. Հայն և յետ բարձման ինքնիշխանութեանն՝ իբրև լեզու և կրօնք՝ ունի պայազատութիւն մը, ունի որոշ տեղի և բարակ գիծ մ'այլ ժամանակին կամարին վրայ. ունի գունէ դեռ եկեղեցական հարստութիւն մը, որ կրրնայ ձգել և յարատևել զհին Հայպետութիւնը՝ քանի որ լեզուն և ծէսն մնան 'ի վերայ երկրի. յուսաւք յի է ցորչափ մնայ և երկիրս:

Լեոն վերջին՝ Հայոց հարստութեան ետքինն ըլլալուն, իրմով գրեթէ մեր ազգն և աշխարհն աննշան մնալուն, իր օտար ցեղէ ըլլալովն և օտար երկրի մէջ վախճանելովն, և իշխանութեանն ատեն փայլուն և փառօք յիշատակներ չթողլուն համար, չի կրնար մեծ սիրելութիւն մը ձգել ազգապանծ Հայոց վերայ. բայց իբրև թագաւոր Հայոց, և սիրող և կոռուող Հայ փառաց և անուան վրայ, իբրև քաջութեամբ և երկայնամտութեամբ և առ հարկի գերի ընկնող, իբրև անարատ քաղաքավարութիւն ունող 'ի թագաւորութեանն և յետոյ, և իբրև ազնիւ, ողորմած, բարեպաշտ, հնարագէտ, մեծաց և փոքունց, թագաւորաց և աղքատաց՝ սիրելի անձ մը, միանգամայն և իբրև քիչ մը քօղաւոր խորհրդապատ (mystérieux) անձ մը, և տարօրինակ բազդի հանդիպող մը, արժանի եղած է և է ազգիս մտադրութեան և սիրոյն. հայկական յուշոյն մէջ խորատիպ անուանց մէկն է վերջինն Լեոն: Ընդհանուր պատմութեան կամ մարդկութեան նկատմամբ այլ նշանաւոր, կամ թէ աւելի որոշ ըսենք, նշանաբաղդ անձ մ'է Լեոն. և բազմատեսարան վիպասանութեան մը առիթ ըլլալէն աւելի, կրրնայ մեծ բարոյական պատկեր կամ վարդապետութիւն մ'ընծայել շատ դաս մարդկան, եթէ ուզէ մէկն ուշիւ քննել եւ նկարագրել իր կենաց ծանօթ պարագաները: Լեոն է ('ի կարգի համանուն թագաւորաց մերոց Ռուբինեանց) և Զ ('ի կարգի պարոնաց և թագաւորաց), այն տարաբաղդիկ իշխանաւորաց և աւագաց մէկն է՝ որ յետ ընկնալու իրենց բարձէն և բաղդէն, աւելի հանգիստ և հարուստ կ'ըլլան, և աւելի անուանի և յիշելի: Այս երկու յատկութիւններն այլ ունեցաւ մեր վերջին թագաւորն իր տարագրութենէն ետև. Հոովմայ պապն, Սպանիոյ, Գաղղիոյ և Անգղիոյ թագաւորք, իրենց երկիրներուն մէջ առատապէս տուին իրեն քաղաքներ, պալատներ, գանձեր, պատիւներ, և որչափ ապրեցաւ՝ միշտ իրենց բարձակից, եզբայր և

համխորակ սեպէին, և արքունեաց մեծա-
մեծ հանդիսից մէջ վերագոյն աթոռ-
ներուն մէկը անոր կու տային: Ինչուան
հիմայ թէ իր և թէ իրեն պաշտօնէից
համար տուած շատ հրովարտակներ
գտուին դիւանատանց մէջ, իր կենաց
վերջի տարիներուն օրագիրը, մահը,
կտակը, կտակկատարութեան մուրհակ-
ները պահուած են. և յայտնի մնան
գերեզմանն, մահարձանն և կիսանդրին¹
գրեթէ աւելի քան զամենայն թագա-
ւորաց մերոց: Հոս միանգամ այլ աշ-
խարհիս ընդունայնութեան բարոյակա-
նը կու տեսնեմք. որ շատ հեղ մեծա-
մեծ մարդկանց՝ միայն կամ հազիւ և
կամ ոչ իսկ գերեզմանը կու թողու յետ-
նոց. այսպէս մեզի այլ մեր 4000ամեան
հայպետաց յիշատակարանըը գրեթէ
բոլորովին ծածկելով մեզմէ՝ անոնց վերջ-
նոյն գերեզմանը միայն յերևանի թու-
ղած է աշխարհիս ամենածանօթ քաղ-
քին մէջ, 'ի խորհրդածութիւն իմաս-
տասէր և քաջագղած մտաց:

Որչափ ծանօթ է Լեոնի կենաց խա-
ղաղ արևմուտքն, այնքան անծանօթ է
արևելքն: Իբրև տասնամեայ թագաւո-
րութեանն ատեն ինչեր ըրաւ (բաց 'ի
քանի մը դժբաղդութեանց), ինչով այդ-
պէս ընտրելի և հաճելի եղաւ Հայոց.
Թագաւորութենէն առաջ ինչ կ'ընէր,
ուր էր, որոյ որդի էր. — ամէնն այլ գեռ
անծանօթ են մեզի, բայց 'ի ցեղէն կամ
տոհմէն: Յայտնի է քեզ, Հայկակ, որ
մեր կիւլիկիոյ իշխանքն նախ Պարոն
կոչմամբ պայազատէին՝ սկսեալ 'ի Ռու-
բինէ ազգականէն Գազկայ վերջին Բագ-
րատունեաց թագաւորի, որոյ անուամբ
և Ռուբինեանք ըսուեցան. և որոյ որ-
դիքն ինչուան հինգ վեց պորտ, 140—50
տարի, իշխանապետեցին, ինն կամ
տասն անձինք, որոցմէ իններորդն Լեոն
Բ՝ առաջին թագաւոր եղաւ Հայոց, և
արու զաւակ չունելով՝ ժառանգ և յա-
ջորդ թողուց իր Զապիւլ դուստրը. ա-
սոր հետ պսակուեցաւ Հեթում՝ Ա՝ 'ի
ցեղէ Հեթմեանց, 'ի բնէ Արծրունի ցե-

1 Ի Թանգարանին Վերսայլի:

ղին. և ասոր պայազատութիւնն այլ
տեւեց իբրև 120 տարի՝ իրմով չորս ազգ
և 8 կամ 9 պայազատ թագաւորոք. ո-
րոց վերջինն եղաւ Լեոն Գ կամ Ե, մե-
ռեալ յամի 1341, չթողով արու զա-
ւակ: Թէ այս և թէ տէրութեան տը-
կարանալուն պատճառաւ, (վասն մեծի
թշնամութեան և անդադար պատերազ-
մաց Եգիպտոսի սուլտանաց), ասկէ ե-
տև Հայոց թագաւորութեան ժառան-
գութիւնն այլ, կարգքն այլ չփոթեցան.
և քանի մը տարի անյաջողութեամբ թա-
գաւորեցին Լեոնի հօրաբեռորդիքն կոս-
տանդին—Յովհան (Ճուան) և կուխտոն,
որք 'ի հօրէ գաղղիացի էին 'ի Լիւսի-
նեան տոհմէ, յորմէ էին և թագաւորքն
կիպրոսի և իշխանք Տիւրոսի. և իբրև
անհաւատարիմք ազգային օրինաց Հայ-
ոց՝ 'ի մահ դատապարտեցան. և անոնց
տեղ դրուեցաւ (1346) կոստանդին Գ
որ թէ 'ի հօրէ և թէ 'ի մօրէ Հայոց թա-
գաւորաց կողմնական գծերէ իջած էր.
և թագաւորեց զգօնութեամբ դժար ժա-
մանակի մէջ մինչև 'ի 1364—5: Իր եր-
կու որդիքն կու յիշուին, Օշին՝ ծնեալ
'ի 1338 և Լեոն՝ յառաջ քան զ'1345:
Ինչու ասոնք չյաջողեցին իրեն. — ան-
տարակոյս կարճօրեայ մեռած պիտի
ըլլան. կամ ըստ ոմանց՝ Լեոն թագա-
ւորած է, այլ մէկէն Եգիպտացուց զէմ
պատերազմի մէջ բռնուած և թունով
կամ խեղդով սպանուած՝ հաւատքը չու-
րանալուն համար: Այնքան մթին մնա-
ցեր է այս բանս, որ շատ ժամանակա-
գիրք և ոչ այս Լեոնի անունը ճանչան¹.
— յայտնի նշան մեծ շիթութեան ժա-
մանակին և անհանգիստ պատերազմաց
և հալածանաց, որ յետ մահուան կոս-
տանդինի Գի մինչև 'ի թագաւորութիւն
մեր վերջին Լեոնին տեւեցին: Այն խառ-
նակ միջոցին թերևս ուրիշներ այլ թա-
գաւորած ըլլան, ինչպէս յիշուի և կոս-
տանդին մը, որպէս թէ թուն ('ի մօրէ)

1 Սխալն քանի մը նոր հայաքնին Եւրոպա-
ցիք՝ որք զկոստանդին Գ ըստինացի համարելով՝
հօրը Պաղտին կոչուելուն համար, այս երկբայա-
կան Լեոնը և մեր Լեոնը նոյնացընեն. այսինքն
զվերջինն Լեոն Զ դնեն որդի կոստանդին Գ:

լևոնի Ե և որդի Հեթմոյ իշխանի մը : Այսպիսի բունարարութեան ատեն ընա- կան էր որ Լուսինեանք այլ թէ 'ի վրէժ սպանման իրենց երկու երեք տոհմա- կցացնէ թէ իրաւամբք ժառանգութեան՝ ջանան Հայաստանի թագը ձեռք ձգե- լու . և այնպէս այլ ըրած է, կ'ըսեն, ցե- ղին գլխաւորն՝ Պետրոս Ա թագաւոր կիպրոսի, որ բազմութեամբ նաւուց ե- կաւ տիրեց ծովեզերեայց կիւլիկիոյ և նուաճեց զչաստ 'ի պարոնայց . յորոց ու մանք ասոր, ոմանք ուրիշներու կողմա- կից կ'ըլլային . իսկ հայրապետն Հռով մայ (Ուրբանոս Ե) գրեց առ իշխանս և առ ուխտ եկեղեցւոյն Հայոց (1365, ապրիլ)՝ որ թողլով զուրիշները թա- գաւորեցընեն զլևոնս այս (վերջին) զազ- գական Պետրոսի թագաւորի . որ թէ իրաւամբք մերձաւոր էր թագին և թէ արդեամբք վարուցն : Հայք հպատակե- լով հարկին և խրատուն՝ թագեցին ըզ- լևոն, նոյն կամ յաջորդ տարին . որ ինչ- պէս իր տապանագրին վրայ կարդա- ցինք 'ի սկզբան՝ ձիւզերտրոյ Լատին թա- գաւոր կոչուի Հայոց . ըսել է որ բաց 'ի ճուանայ և կուխտոնէ՝ երկու ուրիշ Լա- տինք այլ թագաւորած են, որոց մէկն թերևս սեպուի իրենց Պեմունդ եղ- բայրն, նոյնպէս սպանեալ 'ի Հայոց, միւսն այլ Պետրոս, և կամ թէ ֆիլիպ- պոս առաջին փեսայն Զապելի թագու- հոյ, դատեր մեծին Լևոնի, որ նոյնպէս Հայոց և իր խոստման անհաւատարիմ ըլլալով՝ բանտի մէջ մեռաւ : Թողունք այս խնդիրը և գանք 'ի Լևոն :

Զսա ոմանք 'ի մերոց փոքր պատմչաց կոչեն որդի Բրնձիկն, այսինքն (prince) իշխանին . — որ տեղւոյ . . . Անտարակոյս է կիպրոսի Լիւսինեան ² թագաւորաց

1 Տես զնամակն 'ի Պատմ. Հայոց, Գ. 533 :
 2 Լիւսինեան անուն տոհմն (որ հիմայ մարած է) Գաղղիոյ Բուաղիէ գաւառին Լիւզինեան գղե- կէն առած է անունն . հնագոյն տոհմապետն կու յիշուի 'ի Թ դարէ : Փռանկաց ռամիկն մնասպաշ- ատութեամբ կամ աւանդութեամբ կ'ընդունին Մե- լիւզին անուամբ վհուկ մը կամ Յուսերթահարն, որ իր հայրը սպաննելուն համար, կ'ըսեն, ամէն շա- բաթ օր յօձ կը փոխուէր . իր էրիկն Բայիմննա՝ կ'օմնն Բուաղիէի իմանալով այս բանս՝ արգիւնց

հետ մերձաւոր ազգակցութիւնն, ինչ- պէս վկայեց Քահանայապետին թուղթն վասն Պետրոսի թագաւորին . որոյ որ- դին Յակոբ Ա (եղբայր Բ Պետրոսի) յետ մահուան Լևոնի ինք զինքը Հայոց թա- գաւոր անուանեց իբրև երտրոյ աւտի- ձանի ժառանգ նորա : Թէպէտ 'ի հօրէ Լատին կամ Գաղղիացի, հաւանելի է թէ 'ի մօրէ Հայ էր, ինչպէս ճուանն և կուխտոն, և կ'երևի թէ 'ի կիւլիկիա այլ կեցած էր իր մայրենի արքայազարմ Հայոց քով, և ընտանի ու սիրող անոնց կարգաց, օրինաց, լեզուին . գոնէ թա- գաւորութեան ատեն հայերէն օրինօք և պաշտօնէիւք կը վարէր . այսպէս հա- ւանօրէն Լևոնի կիսնն այլ Մարիամ դը- խոյն, որ Մաճառաց թագաւորին ցեղէն էր, և ազգական ֆիլիպպոսի Տարննտայ իշխանին՝ արևելքի կայսր անուանելոյն :

Լևոն թէ և հանճարեղ և սրտաշահ մարդ էր, բայց կիւլիկիոյ գրեթէ քայ- քայեալ թագաւորութիւնը յոտին պա- հելու համար՝ իրմէ վեր և իրմէ դուրս այլ ոյժ և հնարք պէտք էր, որ չգտուե- ցան . և գրեթէ անկարելի այլ էր այն նուազեալ թագաւորութիւնը կործան- մանէ ազատել . վասն զի մէկէն աւելի զօրաւոր թշնամիք կամ հակառակք կայ- ին անոր : Նախ այլազգեաց թշնամու- թիւնն, որոց գլխաւորը էին Եգիպտոսի և Ասորոց սուլտանքն . ասոնց թշնա- մութիւնն կամ ռխութիւնն հին և ար- մատացեալ էր . կիւլիկիոյ դիրքն այս կողմանէս վտանգաւոր էր մեր Ռուբի- նեանց . որովհետև մէկ կողմէն դրակից ունէին (ատեն մը) Ղօնիայի հզօր սուլ- տանները, որ Փոքր Ասիոյ մեծ մասին

պահեց զնա Լիւզինեան բերդին մէջ, ուր մինչև հիմայ մնացեր է կ'ըսեն : Մեր Լևոնի ժամանա- կակից Գաղղիացի մը Ժան ա' Աւա (Jean d'Arras) անուանի վիպասանութիւն մը գրած է (յամի 1387-1394) Melusine կողմամբ, յորում կու պատ- մէ Լիւզինեան գղեկին սկզբնաւորութիւնը, Մե- լիւզինայ գէպքը, և իր երկու անգրանիկ որդւոց մէկուն թագաւորելն 'ի կիպրոս, միւսոյն՝ որ կիւ- ոն կ'ըսուէր՝ 'ի Հայս, որով անշուշտ կ'ակնարկէ 'ի կուխտոնն թագաւոր Հայոց . և ասոր որդւոց մէկն այլ կ'ըսէ երկայն ատեն թագաւորեց 'ի Հայ- աստան, և վրան սուտ մուտ բաներ կու պատմէ, որպէս թէ յականատեսից լած ըլլայ :

տիրած՝ միայն մեր Հայոց Պարոններէն կ'արգելուէին ինչուան Միջերկրականին եզերքը ձգելու իրենց իշխանութիւնը . մէկ այլ կողմէն՝ ինչուան այն ծովերը, քը կը հասնէր Եգիպտոսի սուլտանին զօրութիւնը, շատ հեղ Ասորոց կողմէն, երբեմն այլ նաւով յարձրկելով 'ի կիւլիկիա : Առաջին պարոնայքն և թագաւորքն մեր շատ հնարագիտութեամբ և քաջութեամբ դէմ կեցան Իկոնիացոց, ինչուան որ Հեթում Ա յաջողեցաւ թաթարաց զանին օգնութեամբ տկարացրնել անոնց իշխանութիւնն այլ, Բաղտատայ վախն այլ Եգիպտոսի կողմէն այլ բաւական ապահովութիւն ունէին մերքն, քանի որ լատինքերու սաղէմի կուտիրէին և Ասորոց ու Պաղեստինու մէջ իշխանութիւննին պահէին . իսկ երբ անոնք վերցուեցան, և թաթարք այլ կէս մը իրարու մէջ բաժնուելով, կէս մը մահմետական կրօնքն ընդունելով՝ իրենց վախը և ուժը կորուսին, Եգիպտոսի սուլտանք երբեմն անոնց հաւասար դիմամարտ կ'ելնէին, երբեմն հաշտութիւն և միաբանութիւն կ'ընէին, որով մերոնց վիճակը կասկածելի կ'ըլլար : Իսկ երբ այս ԺԴ դարուն կիսէն ետև թաթարք գրեթէ բոլորովին քաշուեցան յարևմտեան Ասիոյ, և Օսմանեանց նախահարքն սկսան յառաջ գալ հանդարտօրէն տիրապետելով, Եգիպտոսի սուլտանք հանդերձ Դամասկոսի սուլտաններով (որք երբեմն մէկ իշխանութեան տակ այլ կ'ըլլային), առաջին հզօր տէրութիւն եղան Ափրիկէի և Ասիոյ սահմանակից կողմերը, որոց մէջ կը փակուէր կիւլիկիա : Ասոր ամբութիւն էր մէկ մը ծովն, մէկ մ'այլ ծովային քրիստոնեայ տէրութեանց օգնութիւնն, և անոնց հեռուոր նպատան . բայց Հայք բաւական նաւային ոյժ չունելով՝ շատ հեղ չէին կրնար այլազգեաց նաւատորմիզը վանել, անով շատ անգամ իրենց մեծ և ամուր նաւահանգիստն Այաս՝ անոնց ձեռքն ընկաւ և աւերեցաւ . Քրիստոնէից կողմէն այլ շատ օգնութիւն չի գտան . վասն զի ոմանք (վենետկեցիք, ճենովացիք) իրենց վաճառականութեան

զբաղած և շատ հեղ իրարու հակառակորդ և թշնամի մերոնց մեծ շահ մը չէին, թէ ոչ և վնաս . ոմանք այլ (ինչպէս Գաղղիացիք, Անգղիացիք) երբեմն ստակով կ'օգնէին, զորք խաւրելու այլ խոտանային, բայց ոչ երբէք կըրցան խաւրել, թէ ճամբու հեռուորութեան համար, թէ իրարու մէջ կուի ունենալուն : Հին կտորիճ հիւրընկալ (Ոսպիթալի) և Տաճարական (Դամբլուն) ասպետքն այլ նուազեր էին, և ոմանք բոլորովին վերցուած հեռացած 'ի սահմանաց կիւլիկիոյ : Կու մնայր եկեղեցոյ գլուխն, որ իբրև հայր հասարակաց քրիստոնէից գլխայր Հայոց վրայ . մանաւանդ լատեանելով որ անոնց փոքր թագաւորութիւնն էր բոլոր արևմտեան քրիստոնէութեան նախամարտիկն կամ նախապարիսպ պատուարն ընդդէմ անքրիստոնեայ տէրութեանց արևելից . ուստի թէ եկեղեցոյ և թէ արևմտեայ թագաւորաց օգուտ էր Հայոց օգնական ըլլան . և այս բանիս համար ոմանք երկայն գրքեր և ճառեր այլ գրեցին այն ատեն առ Պապն և առ թագաւորս . որոց մէկն այլ սեպելու է մեր Հեթում թագաւորազն պատմիչն : Բայց ոչ Հայոց վերջին թագաւորաց ստեպ ստեպ ազաչանքն և զրկած դեսպաննին կըրցան յարևմտից օգնութիւն մը գտնել, բաց 'ի ստակէ, խոստմունքէ և քաջալերութենէ, և ոչ Պապին առ նոսա տուած յորդորն, վասն վերոգրեալ պատճառաց : Որոց վրայ աւելցընելու է քիչ մ'այլ կրօնական խնդրոց յուզմունքն Սոյ և Հռովմայ մէջ, զոր զայրացուցին պէսպէս սխալ տեղեկութիւնք կամ աւելորդ պահանջմունք, յամառութիւնք և հակառակութիւնք : Ազգերնուս թէ եկեղեցական և թէ քաղաքական գրուիքն՝ մերձաւորութեամբ, տեսութեամբ կամ թղթակցութեամբ ընդ գլխաւորացն արևմտեայց՝ բաւական խելամուտ եղած էին և իրենց կողմանէ դժարութիւն մը չէին տեսներ համաձայն միաբանութեան ընդ արևմտեայց՝ կարևոր խնդրոց վրայ, զորս արդէն շատ հեղ ժողովով այլ ընդուներ և հաստա

տեր էին, բայց ոմանք 'ի կանխակարծ
և անխելահաս իշխանաց եւ 'ի ժողո-
վուրդէն՝ ոչ միայն դեռ խորշէին յօտա-
րաց, մերթ անպատճառ մերթ պատ-
ճառաւ, այլ և իրենց գլուխներէն քա-
շուէին, եթէ ստիպուէին. ինչպէս որ
պատմութիւնն ցուցնէ դժնդակ դէպ-
քերով այլ: Մեր թագաւորքն այլ ինքն
իրեննուն բաւական ուժ չունէին, եր-
կիրնին մասամբ մը՝ պայազատական օ-
րինօք՝ իշխանաց ձեռքն ըլլալով. և Ա.
Լևոն ու Հեթում թագաւորաց կարո-
ղութիւնն և ճարտարութիւնն չկար՝ որ
ինչուան 60000 զօրք գումարէ և դէմ
ելնէ թշնամեաց. ուստի պէտք էր հի-
մայ պաշտպանողական հնարքով 'ի
թշնամեաց փախչիլ, կամ ապաւինիլ
ամրոցներու մէջ, ինչպէս որ ըրաւ շատ
հեղ մեր Լևոնն այլ:

Ասիկայ բնական ապաւէն կամ օգ-
նական մ'այլ կրնար ունենալ զթա-
գաւորս կիպրոսի՝ անոնց ազգակցու-
թեամբն. նոյնպէս Լատինացի ըլլալն և
հաւատոց կողմանէ անկասկածութիւնն
այլ մեծ օգուտ էր իրեն. բայց ժամա-
նակն զայս այլ բանի չբերաւ: Որովհե-
տե այլազգիք կիպրացւոց այլ թշնամի
էին, Պետրոսի յարձակմանն համար ի-
րենց երկիրներուն վրայ. որոյ վրէժն
հանել ուզելով Եգիպտացիք յարձակե-
ցան (1366) երկու Լուսինեան թագա-
ւորութեանց վրայ այլ (Հայոց և կիպրա-
ցւոց). որք ոչ միայն իրարու՝ այլ և ոչ
ինքն իրենց կրրցան օգնել: Ոմանք կու-
սեպեն թէ այս Եգիպտացւոց 'ի կիւլի-
կիա վազելուն ատենն էր՝ որ բազմու-
թիւն Հայոց թողուցին երկիրնին և նա-
ւով փախան Յունաց կողմերը, 'ի Հոռ-
դոս, 'ի Մելիտինէ, և այլն. կիպրացիք
այլ խրատով Ս. Պապուն ջանացին հաշ-
տութիւն խօսիլ իրենց կողմն վազողնե-
րուն հետ. և այսպէս երկուքն այլայս ան-
գամ առանց շատ մեծ վնասու՝ յետ դար-
ձուցին զթշնամին: Անկէ ետքն այլ կիպ-
րոս իր ծովապատ ամրութեամբն և իր
թագաւորաց տարբեր վարչութեամբն
ու արևմտեաց հետ հաւասարութեամբն
կրրցաւ դեռ դար մ'ալ դիմանալ այլ

ազգեաց դէմ. բայց կիւլիկիոյ և Հայոց
թագաւորութեան վախճանն մօտեցեր
էր իրենց ռիսկիւմ թշնամեաց հարուած-
ներով. որք գրեթէ ամէն տարի յարձա-
կելով հոն սրով և հրով կու մաշէին կ'աւ-
րէին զաշխարհքը, և զիշխանս ու բեր-
դատէրս ցրուէին կամ զատէին. թա-
գաւորն երթալով միայնանար, իշխա-
նութիւնն և զօրքն կ'ամիոփուէր, կա-
մաց կամաց կու մարմրէր էր 300 տա-
րուան ուրբինեանց ջահը. ուժով հով-
մ'այլ բաւական էր բողբոլիւն անցնե-
լու զայն, և Քրիստոնէից անօգնական
թողած նախապարիսպը փլցընելու. որոյ
հետ Հայոց թագն և ազգապետութիւնն
այլ պիտի ընկնէր ու ծածկուէր:

Սակայն պէտք է խոստովանիլ, մա-
նաւանդ թէ հուշակել 'ի պարծանս Լեո-
նի և 'ի փառս ազգիս, որ եթէ իր կող-
մանէն այլ անիմաստութեամբ և թու-
լութեամբ այն տկարութեանը և վտան-
գին հասաւ, ոչ վատութեամբ և անճա-
րակ յուսահատութեամբ թագը և զէն-
քերը թողուց՝ իրմէ շատ ու շատ ան-
գամ զօրաւոր թշնամոյն ձեռքը. և թէ
պէտ չեմ կրնար այս փառաց հաղոր-
դել բոլոր մեր ազգային կիւլիկեցիս՝
որք արդէն սկսեր էին ցրուիլ հեռանալ
'ի կիւլիկիոյ, (որպէս երբեմն իրենց նախ-
նիքն 'ի Մեծ Հայոց, Սէլչիւկեանց յար-
ձակման ատեն), սակայն մէկ մասն եր-
կրրցոց հաւատարիմ կեցաւ իր թագա-
ւորին, թագաւորն այլ անոնց իրաւանց
և ազգային պատուոյն: Ոչ միայն պաշտ-
պանողական հնարիւք, այլ և դէմադէմ
պատերազմով զարնուեցան ընդ եգիպ-
տական և դամասկական բանակաց զա-
նազան անգամ՝ բոլոր Լևոնի 10ամեայ
թագաւորութեան ատեն. թէպէտ և
մէկ կողմէն կու տեսնէին քաղաքներ-
նուն այրիլը՝ կ'ապաւինէին բերդերու,
անկէց հալածելու զթշնամին և նորէն
բնակարաննին շինելու. և երբ բերդերն
այլ կ'առնուէին. աւելի ամուր բերդեր
ու լեռներ կ'եղնէին: Այս կերպ կու ինն,
զիրենք ու զհայրենիքն պաշտպանելն՝
ոչ միայն Լևոնիս ատեն, այլ և անկէ ա-
ռաջ, գուցէ թէ անկէ ետքն այլ տեսց,

և թերևս կէս դար մը քշած ըլլայ կիւ-
լիկեան Հայոց կուռիչն և դիմանալն ընդ-
դէմ դարական սպառնացեալ յարձակ-
մանց Եգիպտացւոց, մինչև իսպառ ի-
րենց ցրուրտիլ ու նուաճիլն :

Գիպուածներուն վրայ ցաւ մ'այլ սե-
պելու է այն ետքին և բոլոր ԺԳ դարուն
մերայնոց հանդիպածներուն չյիշուիլն
յաղգային պատմչաց՝ կարգաւ և ոճով :
Մեր պատմչաց պատուական շարն հոս
կու դադրի . յետ Սմբատայ սպարապե-
տի՝ որ կիւլիկիոյ և իր եղբօր (Հեթմոյ Ս.)
և անոր որդւոյն պատմութիւնը ժամա-
նակագրօրէն համառօտած է ցվերջին
քառորդ ԺԳ դարուն , և յետ անոր շա-
րունակողին , յետ Հեթմոյ պատմչի՝ որ
մինչև 'ի ԺԳ դարուն առաջին քառոր-
դը կու հասցընէ վայն , չեմ՝ գիտեր ազ-
գային պատմիչ մը կիւլիկիոյ տանն և
թագաւորաց գործոց , բաց 'ի քանի մը
տարեգիրներէ և յիշատակարանաց , ու
քանի մը հեռաւոր վարդապետաց (Մեծ
Հայոց կամ Ղրիմու) կարճ ու խառնակ
գրուածներէն . որոնց նման խառն և
հակասական են արևմտեայց գրուածքն
այլ այս դիպաց : Ցաւալի՛ նշանք ան-
հանգստութեան և շփոթմանց ժամա-
նակին ու ստէպ աւերանաց և աւարա-
նաց կիւլիկիոյ : Թէպէտ ես չեմ՝ յուսա-
հատիր որ օր մը անծանօթ պատմիչ
մ'այլ յերևան չելնէ այն կողմերէն , մեր
յետին թագաւորաց պայծառ կամ խա-
ւար օրերը մեզի յայտնելու :

Առ այժմ՝ գոհ ըլլանք , Հայկակ , որ
գոնէ քանի մը յիշատակագիրք և տա-
րեգիրք մեզի կ'աւանդեն՝ առանց եր-
կար պարագայից , որ ինչպէս քանի մը
նշանաւոր և կտրիճ ազգաց վախճանին
պատահեր է՝ մեծ և ուժով պատերազ-
մով մը դէմ կենալ հզօր և բռնաւոր
թշնամույ , և զէնքն 'ի ձեռին ընկնիլ ու
նուաճիլ , և ինչպէս թերևս հանդիպե-
ցաւ մեր հին Հայկազանց այլ , որոց յե-
տինն վահէ երբեմն նիզակակից Դա-
րեհի ընդդէմ՝ Մակեդոնացւոյն , և յե-
տոյ « ընդվզեալ յԱղեքսանդրէ մեռա-
նի » , այսպէս եղաւ մեր ուրբինեան
հարստութեանն այլ . և ոչ որպէս զԱր-

չակունեացն՝ իշխանայ վտտթար անձ-
նադատութեամբ և տիրանենգութեամբ ,
կամ՝ Բագրատունեացն՝ պէսպէս խար-
դախ մատնութեամբք : — Յիշատակա-
գրաց զրուցքէն կ'երևի թէ Լևոն չորս
հինգ այլ և այլ անգամ ու տարիներ
զարնուած է Եգիպտացւոց հետ , և մեծ
պատերազմ մ'եղած է յամին 1369 , յու-
րում՝ Եգիպտացիք առաջնորդութեամբ
Շահարօղլի եղբօր սուլտանին՝ կիւլի-
կիոյ լերանց դժուարին անցքերէն ներս
մտան : Լևոն իրեն նիզակակից և սպա-
րապետ զօրաց ունեցաւ անձ մը , որոյ
անունն անգամ անծանօթ և անսովոր
է բոլոր կիւլիկեցւոց պատմութեան մէջ ,
և սովորագոյն է վրահայոց ու մանա-
ւանդ Ուուպելեան տոհմին մէջ (ԺԱ-Գ
դարերուն) . — Լիպարիտ . յետին սպա-
րապետ Հայոց , վարդանանման քաջու-
թեամբ և նահատակութեամբ . որ իր
տիրոջ դիմաց Հայ հայրենեաց և թա-
գին վրայ կուռելով մինչև 'ի յետին
շունչն՝ յաղթութեամբ յառաջեց թըշ-
նամեաց խումբերուն մէջ , և հոն ծած-
կուեցաւ նետերու հարուածոց տակ .
իր մահն՝ յաղթութիւնն այլ հետը տա-
րաւ . հարկ եղաւ որ յետ քաջուի Լևոն
իր բանակին մնացորդովը , և հաշտու-
թեան պայմաններով՝ այն անգամ՝ այլ
յետ դարձընէ Լիպարիտայ սրէն ապ-
րող թշնամին : — Ինչպէս այս պատե-
րազմին և ուրիշներուն դէպքերն այլ չի
պատմեր մեզի ազգային գրիչն , այսպէս
և Լիպարիտայ քաջագործութիւնքն ու
հնարքն . պատմութեան մէջ փայլակի
մը պէս կ'երևի և կ'անցնի Լիպարիտ ,
բայց նախախնամութենէ ծագեալ պայ-
ծառ և բարեբաստ փայլակի մը պէս .
բարեբաղդաբար պատմչին համառօ-
տութիւնը կամ լուրթիւնը՝ երկբայու-
թենէ և տարակուսէ կ'ազատէ , և կու
հաւատարմացընէ , կու հուշակէ , կ'անմա-
հացընէ ազգային երգիչն . — օրհնեալ
ըլլայ¹ . որ հետեւեալ գովք կամ ողբս
գրեր է՝ հայրենասէր , կտրիճ և տեղ

1 Երգոյս հեղինակն է աշխոյժ երգիչն Յով-
հաննէս Թղուբանցի , որ և Սոյ կաթուղիկոս ե-
ղաւ ծն գարուն վերջերը . (1489-1525) :

տեղ (միջին չորս տունքն) բանաստեղծական ոգւով: Հայկակ, կարդա՛, և գոհացիր:


Հոգւովդ սուրբ ես եւ ամբիժ .
 Զքեզ էր ընտրեալ Տէր 'ի յերկնից .
 Պարծանք եղեր քրիստոնէից ,
 Ո՛վ մեծ հրգօր քաջ Լիպարիտ :
 Անձամբրդ քաջ Սամիսոն էիր ,
 Յորժամ ճօշանրդ հագնէիր՝
 Թուրքն 'ի յահէդ դառնար մոխիր .
 Ո՛վ մեծ հրգօր քաջ Լիպարիտ :
 Արեգական նրման պայծառ ,
 Երեսըդ լոյս էր կամար .
 Բարբըդ բարի , խօսքըդ շաքար .
 Ո՛վ մեծ հրգօր քաջ Լիպարիտ :
 Բնութեամբ բարի դէմ աղքատաց ,
 Լըսող էիր վարդապետաց .
 Քո բանդ յամէն երկիր գոված .
 Ո՛վ մեծ հրգօր քաջ Լիպարիտ :
 Զանձնըդ տըւիր վասն օրինաց .
 Մէն կանգնելով հազրի դիմաց :
 Քո սուրբդ շատ սրտեր եբաց .
 Ո՛վ մեծ հրգօր քաջ Լիպարիտ :
 Դու հազարաց դէմ պահապան .
 Մարդ չէ տեսեր քեզիկ նրման ,
 Այս հողածիւրքս որ յերկրի կան .
 Ո՛վ մեծ հրգօր քաջ Լիպարիտ :
 Սրաց երկրիս աստղ լուսատու ,
 Կանգնող էիր յամէն ժամու .
 Թուրքն 'ի յահէդ սարսէր մահու .
 Ո՛վ մեծ հրգօր քաջ Լիպարիտ :
 Այն չար պահիկն որ քեզ հասաւ՝
 Քեզի օգնող չըկայր բընաւ .
 Անձնըդ կարմիր գոյն ներկեցաւ .
 Ո՛վ մեծ հրգօր քաջ Լիպարիտ :
 Զայն չարաչար մահն որ տեսար ,
 Կսկիժ է մօրն որ դուն ծընար .
 Աւող ըզքեզ բերան հազար .
 Ո՛վ մեծ հրգօր քաջ Լիպարիտ :
 Սրաց երկրին պաղչա ու ծառ ,
 Գոյնք 'ի գունաց ծաղկունք որ կայր՝
 Հառաչանք առին զիրար .
 Ո՛վ մեծ հրգօր քաջ Լիպարիտ :

Կաթողիկոս եւ վարդապետ ,
 Սուրբ քահանայք ամէնն 'ի հետ
 Շատ արտասուզք սրտերն երեստ .
 Ո՛վ մեծ հրգօր քաջ Լիպարիտ :
 Հիւսիսային հողմն հիմիկ՝
 Սարգիս՝ յիշող եղաւ քեզիկ՝ .
 Դուն սիւն էիր Հայոց՝ մեզիկ ,
 Ո՛վ մեծ հրգօր քաջ Լիպարիտ :

է Աստուծոյ անունն օրհնած
 Որ անըսկիզբն և անվախճան ,
 Որ ուժ երեստ քաջ Լիպարտին
 Եւ զօրացոյց զիւր սուրբ ծառայն :
 Ի սուրբ Սարգիս քաջին նրման ,
 Ի սուրբ Թորոս , 'ի սուրբ վարդան
 Քան ըզՄուշեղ այլ խիստ յաղթող
 Քան ըզՏրդատ Հայոց արքայն :
 Պատերազմիլ եկեր հափայն (?) :
 Ամէն տարի տասն ու քրսան .
 Ինքն ըզթուման հալածանէր
 Արիւն հաներ դետեր Զիհան ? :

Լիպարիտայ նահատակութենէն երկու տարի ետև նորէն յարձակեցաւ սովորական թշնամին յանօգնական երկիրն Կիւլիկիոյ . Լևոն իր մնացեալ սակաւաւոր պարոններով և զօրքերով դէմ ելաւ իր պարտքը կատարելու , և գոնէ , ուշացընելու կամ պակսեցընելու անոր չարիքը , երբեմն զարնուելով երբեմն փախչելով . մինչև ստիպեցան այլազգիք՝ ոմանք անոր ետևէն ընկնիլ և հալածել , և ոմանք անոր թագաւորական քաղաքը պաշարել . զոր և առին յետ երկար ընդդիմութեան և սով ձգելու , և շատ աւարով ու այրելով քաշուեցան

1 Կու յիշ Ս . Սարգսի համար շարականին ըսածն . « Աւետաւոր Հայոց մեծաց դիմեալ 'ի մէջ երկրի 'ի հիւսիսոյ՝ հողմն հարաւոյ » . և այլն :
 2 Կ'երևի թէ երգիչն գեռ կու շարունակէր մեք այսչափս գտանք : — Վ երջի երէք տան շէքն կամ ոճն տարբեր է առջիններէն , իբրև յորդորակ կամ վերջաբան : Ետքի տան առջի սողի ետքի բառն անծանօթ է . իսկ իմաստն է , ամէն տարի տասն քսան անգամ պատերազմի կ'ենէր , բիւրեր կու հալածէր , և արիւն կու թափէր Կիւլիկիոյ ծանօթ ճիհուն գետոյն պէս յորդառատ :



անկէ և ուրիշ քաղաքներէ ու բերդերէ : Լևոն այլ ստիպուեալ էր ամուր տեղ մը ապաստանելու ուր և պահուրտած մընաց, կամ 'ի գընդէ թշնամեաց պաշարեալ, և կամ կասկածելով անոնց դարանակալութենէն : Այս ծածկուիլն երկար և տարի քշած կ'երևի . և ուր և ինչ ըլլալն մինչև հիմայ իսկ անծանօթ մնացեր է . այնպէս որ այն ատեն՝ աներևոյթ եղած, կամ մեռած կորած կարծուեցաւ . մինչև նոյն ինքն թագուհին Մարիամ յուսահատած էրկանը կեանքէն, այրաբար և տիրաբար սկսաւ մտածել աշխարհքին և ազգին փրկութիւնը . այնքան արժանացաւ տիկնութեան ազգի և մայր հայրենեաց ըսուելու, որքան որ դժուար առթի և ժամանակի մէջ կը ջանար ապրեցընելու զազգն և զերկիրն : Մարիամ այլ փառք և քաջութեամբ եղաւ վերջին թագուհի Հայոց : Խորհրդակցութեամբ հաւատարիմ իշխանաց՝ դեսպան զրկեց զՅովհաննէս արքեպիսկոպոսն Սոյ (որ սովորաբար արքունի քարտուղար էր) և զՄանուէլ ոմն ազնուազգի ասպետի որդի, առ փլիպպոս խնամին իւր 'ի Սիկիլիա, և առ սրբազան հայրապետն Հռովմայ Գրիգոր Թ, իմացընելով Կիւլիկիոյ վտանգաւոր վիճակը և օգնութիւն խնդրելով . նոյնպէս փլիպպոս այլ գրեց առ Պապն աղաչելով որ հայրաբար հնարի օգնելու Հայոց թագուհւոյն : Պապն տեսնելով արևմտեայ տէրութեանց խառն և խռովեալ վիճակը՝ տարակուսեցաւ . 'ի վերայ այսր ամենայնի հոգացաւ գրելու առ գուքսս վենետիոյ և ճենովայ, և առ կարդապետս ասպետաց Երուսաղէմի և Հոռոսի՝ որ ձեռքերնէն եկածին չափ օգնեն . նոյնպէս Անտիոքայ իշխանին այլ գրեց (որ այն ատեն Կիպրոսի թագաւորութեան խնամակալ էր) խնամ տանելու նաև իրենց խնամի Հայոց թագուհւոյն . փլիպպոսի այլ խրատ տուաւ որ գրէ և յորդորէ զԼուտովիկ թագաւորն Մաճառաց օգնելու իրենց ազգական թագուհւոյն Հայոց : Այս օգնութիւններէն աւելի ապահով օգնութեան հնարք մ'այլ մտածեր էին Հայք,

որոց դեսպանն արքեպիսկոպոսն Սոյ իմացուց Պապին, և էր արևմտեայ թագաւորազանց մէկը փեսայացընել Մարիամայ, որ գոնէ իր հայրենի երկրին ոյժը վարձք բերէ Հայոց թագուհւոյն : Ասոր արժանաւոր դատեցաւ Պապն զՈթոն՝ գուքսն Պրունզուիքայ, որ կտրիճ և լաւ անձ մ'էր, միանգամայն և ազգական շատ ազնուաց : Գրեց առ սա սրբազանն . իսկ արքեպիսկոպոսն Սոյ ուզեց անձամբ այլ երթալ խօսիլ հետը, որպէս զի եթէ չյաջողի՝ ուրիշ մը ընտրէ և իմացընէ թագուհւոյն : Ոթոն ուրիշ ալ կրնկալու թագուհւոյ մը խոստացեր էր սիրտը, և փեսայացաւ Նէապոլոյ դըշխոյին . բայց Պապն դարձեալ իրեն յորդորական պարտք դրաւ գոնէ յօգնութենէ չզրկելու զգլխոյն Կիւլիկիոյ : Այս յորդորեալ օգնութեանց մէկն այլ չհասաւ Հայոց . իտալիոյ երկու մեծ ծովազոր դքսութիւնքն՝ որմերձաւորութեամբ և վաճառակցութեամբ ամենէն աւելի յուսալի էին, իրարու հետ կռուելով՝ ոչ միայն ձեռք չտուին Հայոց, այլ և անոնց ամենէն մերձաւոր և բնական օգնականը՝ զԿիպրացիս այլ զբազեցուցին, վենետիկեցուց զաշնակցելով ընդդէմ ճենովացուց : Մարիամայ նոր փեսայ այլ պէտք չեղաւ . իր յանկարծ անբուժեացեալ թագաւոր ամուսինն յանկարծ այլ յերևան ելաւ, այն խորհրդաւոր վերջին Լևոնն՝ որպէս Արայն կամ էրն հայկազուն 'ի մեռելոց վերադարձեալ . և անգամ մ'այլ մըրկապատ երկրնքէ արև ծագեց Կիւլիկիոյ :

Բայց այս արևս արդէն խոնարհեր և մտեցեր էր 'ի մուտս : Հազիւ երկու կամ երեք տարի այլ մնաց Լևոն 'ի բարձրութեան գահուն Հայոց, հոգալու իր տունը և երկիրը, և գրգելու իր մեծասիրտ զուգակիցն ու սերունդքը : Յամին 1375 եգիպտացի և դամասկացի գունդեր՝ առաջնորդութեամբ եղբոր սուլտանին՝ վերջին ուժերնին և վրէժնին թափեցին Լևոնեանց տան վրայ . առին զմայրաքաղաքն Սիս յետ երկար պաշարման : Ժամանակակից մը այսպէս յիշատակադրէ . « Ի ՊիՊի (1375-6) բար

» կացաւ Աստուած 'ի վերայ քաղաքին
 » Սիսոյ, ու սղարեցին զբերդն սեպտեմ'
 » բերէն ու մինչուր 'ի յապրիլ ժ.Չ (6),
 » ու տուին զբերդն օրն ուրբաթ, ոչ
 » այլ իրաց՝ քանց 'ի սովոյ. որ մարծ-
 » պան մի ցորենի ԳՃ (300) Գր. չէր
 » 'ի գտվել. որ կերան կատու վ' էչ. ու
 » այս սատ (սաստ) էր յԱստուծոյ. յա-
 » զագս ծովացեալ մեղաց մերոց մատ-
 » նեաց զմեզ 'ի ձեռս թշնամեաց մե-
 » լոց: Ո՛վ տեսնոյր զմեր խաչերոյն ար-
 » համարհանքն, ու զԱստուածաշունչ
 » գրվոյն կտրտել. զսուրբ սեղանացն
 » կործանենն... »:

Այս անգամ այլ լևոն ելաւ դէմեր-
 նին, բայց ոչ զլիպարիտ ունէր սպա-
 րապետ և ոչ արևմտեան օգնական.
 վերջի անգամն էր որ հայկական գունդն
 նիզակ կանգնեց դէմ՝ իր տանը կործա-
 նողներուն. յետ նիզակին վահանը դրաւ
 կուրծքին պարթևաբար յետ քաշուե-
 լով երեսն 'ի թշնամին, և ամբացաւ 'ի
 լերինս, 'ի տեղի հեռաւոր, օտար և ան-
 ուրեք: Վերջին Հայպեան և թագաւորն
 այլ իր արքունի և զինուորական պարտ-
 քը կատարելէն ետև, յայտնի մահուա-
 նէ փախչելով՝ 'ի բազմութենէ թշնա-
 մեացն՝ իր թագուհեաւ և փիննա (կամ
 Ֆիմի) դատերաւ և անոր փեսայիւ կո-
 ուիկոսի Շահան կամ Շահառ իշխա-
 նաւ, քաշուեցաւ Տորոսի լեռանց ամրա-
 գոյն տեղը, 'ի բերդն կապանայ, որոյ
 կողմանքն հիմայ կիշրէկ-պօղազը կո-
 չին. և ուրիշ անգամներուն պէս դէմ
 դնելով պաշարողաց՝ սպասեց կամ ա-
 նոնց հեռանալուն, կամ ամէն պաշար
 և հնարք սպառելուն. և այս ետքինս ե-
 դաւ: Յետ ինն ամիս չարակրութեամբ
 համբերելու, և յետ զամենայն ուտելի
 պաշար սպառելու, մինչև զմիս և զկա-
 չի ձիոց, լևոն՝ կեանքերնուն խնայելու
 խոստմունք առնելով 'ի պաշարողացն՝
 անձնատուր եղաւ իրեններովն՝ 'ի գե-
 րութիւն, 'ի կապանս, յօտարութիւն
 եզիպտական Գահիրէի և 'ի բանտ, այլ
 և 'ի նեղութիւն, 'ի սպառնալիս չարչա-
 րանաց և մահու՝ վասն չուրանալոյ զհա-
 ւատան: Բայց թէ ինքն և թէ իւրքն ի-

րենց արժանի հաստատութիւն և համ-
 բերութիւն ցուցին երկար տարիներ. զի-
 րենք գերող իշխանն այլ սուլտանու-
 թեան հասնելով և յիշելով խոստմուն-
 քը՝ մահուան սպառնալիքը վերուց,
 բայց ոչ բանտարգելութեան նեղու-
 թիւնը և տխրութիւնը, և ապագային
 անստուգութիւնը: Եօթն տարի լևոն և
 Մարիամ՝ վերջին թագաւոր և թագու-
 հի՝ Հայոց՝ իրենց նախորդաց և պաշ-
 տօնէից պակսութեան պարտքը քաշե-
 ցին. ամէն կորստեան մէջ անկորուստ
 պահելով սրտերնուն մեծութիւնը և
 սուրբ հաւատոց յոյսը, բարեպաշտու-
 թեամբ միխթարուէին յանմիխթարու-
 թեան անդ. ուրիշներէ զատ յիշելով
 թերևս իրենց նախնին՝ զլևոն Գ, զոր-
 դին Ա Հեթմոյ, որ նմանապէս պատե-
 րազմի մէջ զերի ընկնելով (հարիւր
 տասն տարի առաջ), յետոյ աղաչանօք
 և փրկանօք հօրն՝ ազատեր էր: իրենց
 մէկ միխթարութիւն, միանգամայն եւ
 սրտի այրուք էր մանկամարդ դուստրն
 փիննա, որ փոխանակ կոուիկոսի ամուր
 քարաբերդին պատշգամներէն լսելու
 միջերկրական ծովուն ալեաց զբօսանքը
 և հին քարայրներուն զարմանալի ձայ-
 ները, կու լսէր դաժան շղթայից շուրն-
 չելը: Էրիկն Շահան քան զճնողսն աւե-
 լի իր սիրոյն ու հասակին սրբազան
 պարտք սեպելով իր որովին և աներոջ
 փրկութիւնը՝ հինգ տարիէն հնարք մը
 գտաւ բանտէն փախչելու, և լևոնէն
 թղթեր առնելով բերաւ առ թագաւորս
 արևմտից, թէ ոչ անոր երկրին և թա-
 գաւորութեանը՝ գոնէ զլխուն ազատու-
 թիւնը մուրալու: Շահան թղթերուն հետ
 բերանացի պատմեց Հայոց թագաւորա-
 կան տան քաշած վտանգները՝ սկսեալ
 իրենց դերութենէն, և ամէնուն սիրտը
 կու շարժէր: Բայց ամենէն աւելի կզե-
 մէս կամ՝ Բոպերդ դերապապն յԱլի-
 նիոն վառուեցաւ 'ի ջանս փրկելու ըզ-
 լևոն, և զրեց առ թագաւորս քրիստո-

1 Ոմանք կ'ըսեն թէ սուլտանն ազատ թողուց
 զթագուհին, բայց նա յանձն չառաւ բաժնուիլ
 յընկերէն: Ըսող այլ կայ թէ լևոն զկինն և ըզ-
 դուստրն կորուսած ըլլայ 'ի Գահիրէ:

նէից . յորոց պատրաստագոյնք գտան Սպանիացւոց թագաւորն , Յովհաննէս՝ Կառղիլիոյ և Պետրոս՝ Արագոնի . գրեցին առ սուլտանն Եգիպտոսի , փրկանք խոստացան և տուին : Յետ եօթնամեայ գերութեանն՝ ազատութիւն գտաւ , Լեոն ելաւ ՚ի բանտէ և յարստրանաց (1384) և փութացաւ առաջին երախտեաց շնորհակալիքը մատուցանել առ միակ պատճառն ազատութեան , առ Ազատարարն ամենայն աշխարհի , և զնաց իրեննեւրոզն ՚ի սուրբ քաղաքն Երուսաղէմ , երկայնատեն կենալով և պտրտելով յուխտ սրբազան տեղեացն . և այն ատեն կրցածին չափ և յետոյ այլ առատ արգք պատուեց զանոնք . մանաւանդ որ , եթէ ստոյգ է աւանդութիւնն , իր թորոս անուամբ որդին (որ չյիշուիր առաջ ՚ի պատմութեան) մեռաւ հոն յերուսաղէմ , և հայրն աւանդելով զնա այն սուրբ հողուն՝ Ս . Յակոբայ Հայոց մեծ տաճարին հիւսիսակողմը եկեղեցի մ՝ այլ շինեց և յիշատակաւ որդւոյն անուանեց Ս . թորոս՝ : — Այս սրբազան տեղիքը և յիշատակքը այնքան սիրեցին հեզահոգի տիկնայքն՝ մայր և զուստր , Մարիամ և Փիննա , որ չուզեցին անկէ հեռանալ . թերևս ըսին Լեոնի , զնա՛ զույարևմուտս , և եթէ յաջողիս նորէն թագաւորութիւնդ ձեռք ձգելու՝ մենք այլ դառնանք . ապա թէ ոչ՝ մենք Քրիստոսի սուրբ տնօրէնութեան տեղեաց աղախինք մնալով՝ ՚ի հասարակաց արքայութեան անոր և քեզ հետ թագաւորենք :

Ասանկ մեծ և սրտառուչ պարտաւորութեամբ մեկնեցաւ Լեոն միայնակ ² . և դարձաւ բարերար և բարեկամ՝ մարդկանց այլ շնորհակալ ըլլալու . նաեւ եկաւ նախ ՚ի կիպրոս իր մերձաւոր մըտերմաց տեսութեան : Անշուշտ ոչ առանց խոր և խուլ հառաչանաց նշմարելով անկէ իր երբեմն տասնամեայ

տառապանօք թագաւորութեան աթոռը , կիւլիկիոյ եզերքը , և դարձեալ հոմերական պանդրխտին (Ոգիւսեւսի) պէս՝ արտասուտ աչքերը և ընթացքը յարևմուտս ուղղելով , սլացաւ նախ առ քահանայապետն՝ գորովանօք շնորհակալութեամբ . անկէջ առ ազատութեան մեծագոյն միջնորդն՝ Յովհաննէս Կառղիլիոյ : Այս ազնիւ և մեծանձն թագաւորս իբրև թագակից եղբայրաբար ընդունեց զԼեոն , և յորդորեց այլ իր երկիրներուն մէջ արքայաբար ապրելու . և անոնց մէջ ազնուագոյն մասը , հիմակուան աշխարհին մայրաքաղաքը , զեղեցիկ Մատրիտը՝ տուաւ Լեոնի ստացուած և աթոռ , բոլոր անոր շրջակայ սահմանաց այլ ազատաբար տիրելու ցորչափ ապրի , անուանելով Տէր Մատրիտայ , Վիլլարէալայ և Անտուխարայ : Մատրիտիք իրեն շնորհաւորութեան և հպատակութեան նուիրակներ խաւրեցին (2 հոկտ . 1383) , ինքն ալ իշխանութեան հրովարտակ հանեց (19 հոկտեմբեր) , և տիրութիւնը պահեց Լեոն մինչ ՚ի մահ . նորոգեց Մատրիտու արքունի պալատը , թէ և քիչ բնակեցաւ անոր մէջ . մինչև հիմայ պահուի ՚ի դիւանս Սեկովիոյ քաղաքին Սպանիացւոց հրովարտակ մը՝ զոր Լեոն տուաւ Մատրիտեցոյ նոյն քաղքէն (յամին 1389) , շնորհելով անոնց խնդրած ազատութիւնները . իսկ Մատրիտիք դարձեալ խնդրեցին իրմէ , ինչպէս կասողիլիոյ թագաւորէն այլ խնդրեր էին , որ յետ Լեոնի՝ Մատրիտ նորէն կասողիլիոյ թագին դառնայ : Լեոն այսոր համար այլ հրովարտակ մը գրեց յամին 1394 : — Սպանիայէն ՚ի Գաղղիա անցաւ (1385) առ թագաւորն կարողոս Զ , թէ շնորհակալութեան իրեն խոստմանցը և բարեկամութեանը և թէ հնարք և օգնութիւն փնտռելու նորէն կիւլիկիոյ դահը հաստատելու : Նոյն բանը խնդրեց և ՚ի Ռի-

1 Ընտրութեան թուականն կ'ըսուի ՊԼԵ , 1386 :
 2 Լեոն իր պանդխտութեան ատեն և իր վերջի տարիներն այլ ինչուան ՚ի Կունաց երկիրն ճանապարհորդած է . արդեօք չէ՞ եկած անգամ մ՝ այլ իր կենակիցը և սրտակիցը տեսնելու :

1 Այս ատեն Հռովմայ հայրապետն էր Ուրբանոս Զ . բայց յԱւինիոն այլ հակառակաթող պապ մը կայր , Կղեմէս Ե . Լեոն կ'երևի թէ նախ առաջնոյն՝ յետոյ երկրորդիս այլ եկաւ , բայց հաւան չէր այս երկպառակութեան :

քարտ Բ Անգղիոյ թագաւորէն : Երկու թագաւորն այլ իրենց հաւասարի և եղբօր պէս ընդունեցան զինքը , բայց փոխանակ անոր օգնելու՝ իրենք կերպով մը իր օգնութիւնը և ճարտարութիւնը ուղեցին իրենց երկուքին մէջ երկայն հակառակութիւնը և կռիւր դադրեցընելու համար , որով առաջուց այլ չէին կրցած օգնել անոր . Լևոն բնական սրտաշահութեամբն , և իր անձնական կամ ազգային շահուն սիրով ստէպ ստէպ երկու թագաւորաց և մայրաքաղաքաց կու զիմէր , և անով շահեցաւ անոնց բաւական հաշտութիւն , իրեն այլ թէ ոչ հին թագը՝ գոնէ թագաւորական կեանք մը : Ոչ պակաս քան զՅովհաննէս ընդունելութիւն ըրաւ Լևոնի կարողոս այլ . որ և մեծ հարկինք մ՝ ըրաւ Հայոց թագաւորին , իր տէրութեան բոլոր մեծամեծները հրաւիրելով . որք հետաքրքրութեամբ կու հարցընէին անոր դիպուածները , և արևելից վիճակը , մանաւանդ Յունաց կայսրութեան և Թաթարաց բռնակալութեան . և աւելի մտադրութեամբ այլ կու լսէին : Լևոն թէ զանոնք հաճեցընելու համար թէ ինքզինքը՝ լաւ և երկար տեղեկութիւն տուաւ Թաթարաց զանին և Եգիպտոսի սուլտանին վրայօք , և անոնց իրեն ըրած թշնամութեանը և աշխարհքը աւրելուն . և խոր ու լուսաւոր քաղաքական նախատեսութեամբ իմացուց՝ որ Յունաց տէրութեան վտանգը ոչ այնչափ այս մէկէն է կամ մէկայլէն , հապա երրորդէ մը՝ որուն այնչափ ծանօթ չէին . և էր նորահաստատ Օսմանեան պետութիւնն , որոյ գլխապետն Մուրատ-Պէկ (այսինքն սուլտան Մուրատ որդի Օրխանայ) շատ կտրիճ , զօրաւոր և խոհեմ մարդ էր , ուսկից զանն և սուլտանն (Եգիպտոսի) անգամ պատկառէին . իսկ նա դեռ կու խնայէր անոնց երկիրները կոխելու՝ իրեն հաւատակից ըլլալուն համար : Անշուշտ , կ'ըսէր , Մուրատ-Պէկ պիտի առնու ըզկ.Պօլիս՝ եթէ չփութան արևմտեայք իրենց միջի պատերազմները դադրեցնելու և շատ զօրք թափելու յարևելս . նոյն

պէս այլ պապերուն երկպառակութիւնը վերցընելու . որ այլազգեաց այլ արհամարհելի կ'երևէր , և անով զարևարտեայս բաժանեալ սեպելով՝ չէին վախէր անոնցմէ : Իսկ ինքն Լևոն այս վիճակիս մէջ շատ փափագելի կու սեպէր որ Մուրատ տիրէր իրեն երկրին (կիւլիկոյ) . վասն զի , կ'ըսէր , Մուրատ-Պէկ մեծահոգի և առատասիրտ մարդ է , միայն հպատակութիւն կ'ուզէ յիշխանաց , և կու թողու որ ամէնքն իրենց երկրին տիրեն : Այս այլ աւելցուց Լևոն , թէ Մուրատ-Պէկ միայն զՓռանկա կու սիրէ յարևմտեայց , և կու զուարճանայ երբ անոնց վրայօք լսէ , միշտ հարցընելով ճանապարհորդաց : — Իսկ իր կորուսած թագաւորութեան վրայ , երբ նորէն հարցուցին , Լևոն համարձակ իմացուց որ առանց արևմտեայց օգնութեան անկարելի էր ձեռք ձգելը . և թէ միայն կոռիկոս անառիկ բերդն ազատ մնացեր է ճենովացոյ ձեռք :

Այս խօսքերով և ուրիշ պատմութեամբ Լևոն բոլոր ունկնդրաց սիրտը շահեցաւ . թագաւորն ըսաւ մեծամեծաց թէ պէտք է պատուեմք և հանգիստ պահեմք զթագաւորն Հայոց , ինչպէս իրեն և ինձի կու վայլէ . ինչուան որ յաջողութիւն գտնեմք զօրօք և զինուք անցնիլ յարևելք և նորէն իր երկրին վրայ թագաւորեցնել զնա : Հրամայեց կարողոս որ հասարակաց զանձէն ամսէ ամիս 500 Փրանգ տրուի Լևոնի (այն ատենուան Փրանգն ոսկի էր) . և հիմայ այլ մէկէն 5000 , իրեն կահ կարասիքը պատրաստելու համար . իրեն բնակութեան տեղ այլ Ս . Դիոնես սեայ արուարձանին մէջ Սէնդ-Ուան (Saint-Ouen, Saint-Audoin) կամ Ս . Անտոն մեծ ապարանքն , (որ և Noble maison անուանեցաւ) : Այս եղաւ Լևոնի հաստատ բնակութիւնն իր պանդխտութեան ատեն . և ամէն արքունի հանդիսից մէջ կու մտնէր կ'ելնէր , աւելի քան զաւելի սիրելի ըլլալով իր հիւրընկալաց :

Բայց իր գլխաւոր խնդիրը յաջողցընելու համար՝ պէտք էր Անգղիոյ թագա-

ւորին սիրտն այլ շահիլ . որուն՝ կ'երևի թէ Անգղիացիք առջի բերան քիչ մ'ընդդիմացան , փրանկաց դէմ ատելութեանն և պատերազմին պատճառաւ . և պատմիչաց տարածայնութենէն որոշ չիմացուիր թէ առջի անգամ 1385ին վերջերը ինչպէս հոն գացեր և դարձեր է . բայց յաջորդ տարւոյն սկիզբները նորէն գնաց Գալէէն 'ի Տուլր անցնելով . ուր Ռիքարտայ հօրեղբարքն բանակով զօրաց պահապան կեցեր էին , և իրեն հետ մարդ գնելով խաւրեցին թագաւորին . Ռիքարտ առանձին ընդունելութենէն ետև՝ իր խորհրդականաց ժողովին ներկայացուց զլևոն՝ անոր խնդիրքը լսելու համար : Խորհրդականք կասկածելով որ կարողութիւն թելադրութեամբ եկած է նա՝ քիչ մը դժարեցան , և կանդորբերայ արքեպիսկոպոսն կերպով մը մեղադրեց իրեն զինեալ մարդիկներով զալը : Ռիքարտ իբրև լևոնի սիրտն առնելու համար շատ և թանկ բաներ ընծայեց , զորոնք չընդունեցաւ լևոն , բաց 'ի մատանի է մը որ 500 ֆրանգ (ոսկի) կ'արժէր . և շուտով դարձաւ 'ի Գաղղիա , ու պատմեց կարողութիւն իր բանագնացութիւնը , զոր իբրև ինքն իր գլխուն հասարակաց բարւոյն համար ըրած էր , և ոչ 'ի խընդրոյ նորա , և այսպէս այլ իմացուցեր էր Անգղիացւոց : կարողութեան խմանալով անոնց ծանրասրտութիւնը՝ սկսաւ նորէն պատրաստուիլ յԱնգղիա վազելու : — Բայց Ռիքարտ նորէն խորհրդածելով՝ զիջաւ լևոնի բարի խրատուց , և մէկէն հրովարտակ հանեց խօսելու հաշտութեան վրայ , վասն փառաց Աստուծոյ և զթոյ մարդկութեան և վասն շնորհաց լևոնի թագաւորին հայոց . (et auxi à les instanz prieres et requestes, qui nous ont este faites par notre cousyn, le roi d'Arménie) . և լևոնի երախտեաց համար այլ տարեկան թոշակ կապեց (1386 փետր . 3) 1000 լիւրայ . իրեն բնակութեան տեղ մ'այլ : Որոց շնորհակալութեան և խնդրոց յաջորդութեան համար նորէն գնացեր է լևոն 'ի Լոնտոն . ինչպէս Ռիքարտոսի զանազան հրովարտակները և զրբերը կու յայտնեն . որոց

մէկով (18 մարտի 1386) կու պատուիրէ որ ազատ թողուն զլևոն 40 ձիաւորով և ուրիշ պաշտօնէիք երթալ գալիր երկրին մէջ . լևոնի այլ գրէ (12 մայիս) որ ինչուան 100 ձիաւորով կարենայ պտրտիլ յԱնգղիա մինչև նոյն տարւոյն վերջերը . դարձեալ հրովարտակաւ պատուիրէ (24 հոկտ .) որ հազարապետն կամ տաճարապետն (magister hospitii) լևոնի՝ Յովհան Ռոսպեան Johannes de Rusp) կարենայ ազատութեամբ գալ հինգ մարդով (և վեց ձիերով , և աղեղամբք և 24 փետրաւոր սլաքօք) . քանի մ'օր ետքն (28 հոկտ .) ուրիշ գիր մ'այլ՝ որ հազարապետն կարենայ առանց մաքսի մտցընել 'ի Գաղղիոյ յԱնգղիա 150 սափոր զինի՝ լևոնի մարդկանց համար : Նոյնպէս գիր մ'ազատութեան լևոնի սենեկապետին համար (8 նոյեմբ .) : — Թագաւորին հօրեղբայրն կլոսղորի դուքան այլ մեծ պատուով և սիրով հիւր ընդունեցաւ զլևոն իր պալատին մէջ :

Լևոն կրցածն ընելէն ետև՝ պարապ ժամանակները ուրիշ կողմեր այլ կ'երթար , ինչպէս յիշեցինք 'ի Սեկովիա գրտուիլն յամի 1389 . նոյն տարին մեծ քաղաքական և արքունի հանդէս մ'եղաւ 'ի Բարիզ (20 օգոստ .) 'ի պատիւ թագուհւոյն . կոչնոց ատեն , յորում շատ արքայազուն հիւրք այլ կային , զլևոն բազմեցուցին թագուհւոյն քով : Ասոնք աղէկ , բայց լևոն իր գահուն վրայ չէր . Գաղղիոյ և Անգղիոյ հաշտութիւնն այլ չ'յաջողեցաւ . գոնէ շատ ուշ . 1391ին մեծ ժողով մ'եղաւ յԱմիէն քաղաքի Գաղղիոյ վասն հաշտութեան . ուր եկեր էին Անգղիոյ դեսպանքն , հօրեղբարք թագաւորին . հոն էր և մերս լևոն . երկու ազգաց խնդրոյն վրայ խօսելէն ետև՝ կարողութեան խօսեցաւ լևոնի թագաւորութեանն համար այլ . Անգղիացւոց դեսպանքն խոստացան զայն այլ յիշեցընել իրենց թագաւորին : Երկու տարի վերջը՝ 1393 , գարնան ատեն նորէն հաշտութեան պայմանադրութիւն կ'ըլլար 'ի Գալէ . իսկ Բ կարողութեան յԱլբրիլ էր . հոն եկաւ լևոն Յունաց երկրէն դառ .

Նալով, ուսկից գալու ատեն հեռուէն անգամ մ'այլ, և վերջին անգամ, 'ի մայրն մօտեցած արևու պէս, ողջունք էր իր հայրենեաց և արքայութեան սահմանները (Կիւլիկիա), չիշխելով և յետ իբր 20 տարուոյ ոտքը ներս գնելու . վասն զի իմացաւ և հիմայ իմացուց որ այլազգիք լցուեր են հոն, և Կոռիկոս բերդը միայն դեռ ազատ մնացեր է 'ի ձեռս քրիստոնէից : Զայս լսելով նորէն վառուեցան շատ Գաղղիացիք՝ և զէնք ունչան խնդրէին երթալու հոն յօգնութիւն Լևոնի . և կու սպասէին ժամ մ'առաջ հաշտութեան հռչակուելուն : Եւս առաւել Լևոն (անգէտ իր սպառեալ ժամանակին), քանի մ'ամիս ետևնորէն փութացաւ գնաց 'ի ժողովն զեսպանաց՝ որք էին երկերկու հօրեղբարք երկու թագաւորացն, 'ի Լոլինկէն՝ Գալէի մօտ . հոն վերջին սրտի թելադրութեամբ խօսեցաւ իր և Հայոց թագին բարձրանալուն համար : Այս անգամ զեսպանքն և մանաւանդ Կլոսդրի դուքսն՝ աւելի տարութեամբ ընդունեցան Լևոնի խընդիրքը, և աւելի հաւանականութեամբ խոստացան . աւելի մեծայոյս դարձաւ Լևոն այլ . վասն զի հաշտութեան պայմանքն երկու կողմին այլ հաճոյ կ'ըլլային . և քիչ ատենէն իրենց թագաւորաց տանելով՝ ձեռնադրեցան կնքեցան . զինստուլ և հաշտութիւն ըրին գոնէ չորս տարուան համար : Թերևս երկու թագաւորներէն աւելի այս հաշտութեան վրայ զուարճացոյն՝ պիտի ըլլար անոր միջնորդն՝ Լևոն, թագաւորն և թագասէրն Հայոց . բայց աւաղ . գրեթէ հաշտութեանն հետ կնքուած էր և Լևոնի կեանքն :

Տարի մը և աւելի առաջ (1392 յուլիսի 20) Լևոն իր կտակը գրեւ էր Յոհան արքայի Գաղղիոյ արքունի մօլը հակաց զխաւորին ձեռօք . յորում յետ յանձնելոյ զհոգին առ Աստուած՝ նախ պատուիրէր որ մարմինը թաղուի 'ի վանանորահաստատ Կելեստինեան կամ Երկնային (Célestin) անուանեալ կրօնաւորաց, և եթէ անոնք չուզեն՝ ուրիշ վանք մը . և վրան պարզ ճերմակ զգեստ

մը հագցընեն, գլուխն և ոտքն բաց . դա գաղը վերցընեն 12 աղքատք, չորս այլ ջահակիր աղքատք, ամենքն այլ ճերմակազգեստ : Յետոյ պատուիրէր իր ունեցած պարտքերը վճարելու . և ապա զանազան գումարներ սահմանէր այլ և այլ եկեղեցեաց և վանաց . իր թաղուելու եկեղեցւոյն այլ թողուր բոլոր իր մատրան սպաքը, որպէս զի իր հոգւոյն համար աղօթեն : Վերջը կու պատուիրէ որ մեռնելուն պէս՝ բոլոր այս պանդրխտած երկիրներուն մէջ ունեցած ստացուածքը չորս հաւասար մասն բաժնուի . առաջինն տրուի աղքատաց և վերոյիշեալ բարեպաշտութեան տեղեաց . երկրորդ մասն տրուի իր թաղուելու եկեղեցւոյն, ուր ամէն օր իր հոգւոյն համար մէկ երկու պատարագ մատուցանեն . երրորդ մասն տրուի իր մէկ օտարածին որդւոյն՝ կի կամ կիւյոզ կոչուած, որ դեռ տղայ էր, և անոր դաստիարակութեան ծախքն հոգայէն ետևէրք . քսան տարուան ըլլայ՝ զրամազլուխըն իրեն յանձնուի . իսկ եթէ նա քրսան տարիէն առաջ մեռնի՝ աղքատաց տրուի : Իսկ չորրորդ մասն ընչիցն բաժնուի իր ամէն սպասաւորացն, ուր այլ որ ըլլան : Եւ այս ամէն բանս կատարել յանձնէ իր սենեկապանին և հազարապետին : Իսկ ընդհանուր կամ բարձր կտակակատար կ'աղաչէ որ ըլլան (բաց 'ի Գաղղիոյ թագաւորէն), թագաւորն Անգղիոյ, Կաստիլիոյ և Արագոնիոյ, զորս իրեն համէիրակ (cousin) կ'անուանէ :

Ի 29 նոյեմբերի 1393՝ տարւոյն՝ Բարիզու Գուռնել (Tournelles) ըսուած պալատին՝ մէջ՝ պանդխտութիւնն և կեանքը կատարեց Լևոն Զ, վերջին թագաւոր Հայոց . և թագաւորական պատուով ու հասարակաց սգով յուղարկեցաւ յեկեղեցի վանաց Երկնայնոցն, բարերարն բազմութեան կարօտելոց և բարեկամն թագաւորաց . իր պաշտօնեայքն և սպասաւորքն ամէնքն այլ ճերմակ հա-

1 Որ էր 'ի Saint Antoine փողոցին, և թագաւորանիստ պալատին դիմաց :

զած՝ անոր որոշած աղքատներովն յուղարկաւոր գնացին . իրեն այլ ճերմակ հագուցեր էին , ոչ իր ուզած խոշոր լաթովն , այլ արքունի բեհեզով , ճերմակազարդ անկողնի վրայ դրած , գլխուն քով այլ դրած ոսկի թագ մը : Շատ հին ատեններէ սովորութիւն էր Հայոց թագաւորաց՝ ոչ միայն ՚ի կեանս այլ և ՚ի մահուն սպիտակազգեստ երևիլ . այնքան գերազանց սեպուած էր Հայպետն առաջի ժողովրդեան : Եկեղեցւոյն աւագ սեղանին քով կամարի տակ պատին մէջ հաստատած դրին Լեոնի դամբանը սև տապանաքարիւ , որոյ վերայ հանգուցին իր չափով արձանն ճերմակ մարմարէ՝ արքայական նշաններովն : Հոն 400 տարի հաւատացեալ ննջեցելոց քունը քաշելէն ետև , անցեալ դարուն ետքերը մեծ քաղաքական շփոթութեանց ատեն՝ սրբապիղծ ձեռք՝ ինչպէս ուրիշ թագաւորաց այսպէս Հայոց վերջին թագաւորին հանգիստն այլ խռովեցին . խորան և դամբան վեր ՚ի վայր եղան . դարական խաղաղացեալ ոսկերքն ժամանակէն աւելի՝ բռնաբարութեան խաղալիկ եղան . Կիւլիկիոյ թագաւորաց թշնամի Բէօլէմէններուն չըրածը՝ աշխարհիս աւմէնէն բարեկիրթ կարծեցեալ ժողովուրդն ըրաւ . այսքան իրարու մօտ են կիրք և կրթութիւն : Կենօքն հալածեալ , հանգիստ վախճանեալ , յետ մահուն այլ իր հալածանքը կրեց Լեոն : Բայց դարձեալ բոլորովին անբազդ չեղաւ . խնայիչ ձեռք ազատեցին իր դամբանը , և տարին թանգարանի մը մէջ դրին , ուսկից յետոյ ՚ի խաղաղանալ երկրին՝ Փրանկաց թագաւորաց մնացեալ նշխարօք և տապանօք տարին զետեղեցին Ս. Դիոնեսիոսի հոյակապ վանաց տաճարին տակ , ուր որ ականատես եղած՝ քեզ այլ ցուցի , Հայկակ : Հոն է մինչև ցայսօր Հայոց վերջին թագաւորի Լեոնի մահարձանն իր սև անկողնովն , իր արքունի նշանօքն և արձանագրութեամբ , որպէս և տեսնես . բայց նշխարքն ուր . . :

Լեոնի երկու գլխաւոր բարեկամքն և պաշտպանքն Բիքարտ Բ և Կարոլոս Զ խնամով հոգացան անոր կտակը կա-

տարելու . և իրենց վկայութիւններն կամ անորորագիրք այլ դեռ պահուին ՚ի դիւանս՝ կտակին զանազան պայմանաց կատարման : Ասկից այլ յայտնի կ'երևի այս երկու թագաւորաց մեծարանքն և սէրն ՚ի վերայ Լեոնի , և ասոր աչալուրջ , սիրելի և անձնանուէր բնաւորութիւնն . զոր սիրեմ ես , Հայկակ համարիլ չքնաղագոյն կամուրջ մը Գալէի վրայ ձգուած ընդ մէջ Գաղղիոյ և Անգղիոյ . որով անցուց Լեոն այս երկու մեծ և նախանձընդդէմ ազգաց խաղաղութիւնն : Արդեօք այսպիսի բազդ կամ փոխարէն մը պիտի ունենայ Լեոնի սեփականեալ ազգն ուրիշ անգամ մ'այլ : Փրանկաց թագաւորն որ երկարակեաց եղաւ յետ Լեոնի , անոր թողած զաւակին վրայ այլ խնամք ցրցուց , և իր մահուանէն տարի մ'առաջ (1421) թուղթ մը գրած է հաճութեան առ ժողով երիցանց Սուսոն քաղաքի՝ զԿիւյոզ իրենց եկեղեցւոյն կանոնիկոս ընտրելուն համար . վասն զի այս ժառանգս Լեոնի եկեղեցական վիճակ ընտրեր էր , և յառաջ ՚ի Պրի (Brie) սարկաւազապետ էր եղած՝ : — Իսկ Լեոնի բուն հարազատքն և կենակիցքն , վախճանեցան յերուսաղէմ , կիսն գլխոյն Մարիամ անարատ կենօք յամին 1405 , և դուստրն Փիննա յետ ամաց . որպէս թէ նուիրական տիրուհիք՝ Հայ հայրենեաց սրբազան կրակին մոխրոց վրայ հսկելով , և զբանջելի խելամտութեամբ քան զըբնաղ հաւն փիւնիկ՝ այն աճիւնացեալ կայծակը խորհրդաբար խառնելով Քրիստոսի կենդանաթաղ գերեզմանին անմահարար նշուլից հետ :

Այսպիսի են՝ Հայկակ , համառօտ յիշատակք Լեոնի վերջնոյ . աւելորդ է մեզի հոս իրմէ ետև իր երկրին և ժառանգութեան անցքը քննել . այլ այսչափս հարկ է ըսել Հայոց թագաւորութեան վրայօք , որ Լեոնի մահն լսուելուն պէս՝ Յակոբոս Ա թագաւորն կիպրոսի իբրև ազգական և ժառանգ Լեո-

1 Ըստ ոմանց երկու էին անհարազատ որդիքն Լեոնի , մէկն եկեղեցական , միւսն զինուորական . բայց կտակն զմէկ միայն յեւէ :

նի՝ պատկեցաւ անոր թագոյն այլ և անուանեց զինքն թագաւոր Կիպրոսի, Երուսաղեմի և Հայոց՝ այս անունս անցաւ իր յաջորդաց այլ մինչև ՚ի յետինն, որ է զչիոյն Կատարինէ դուստր Գռնարոյ դքսին վենետկոյ . սա անժառանգ ըլլալով յամին 1489 տուաւ զկղզին ՚ի վենետկեցիս, և ինքն այլ մեռնելով ՚ի վենետիկ (1510) իր գերեզմանին վրայ այլ թողուց ոսկեքանդակ գրով Հայոց տիկնութեան անունը: Բայց իրմէ առաջ Յակորոսի թոռն Յովհաննէս Գ թագաւորն՝ օրինաւոր մանչ զաւակ չունելով՝ յետ մահուն իր դուստրն Գաւլոզդա որ այրի մնացեր էր ՚ի թագաւորէն Փորդոզալի, վեց եօթն տարի Կիպրոսի (և անուամբ՝ Հայոց) թագուհի եղած էր . և երբ Յակոր Բ անհարազատ որդի Գ Յովհաննու հալածեց (1464) զԳաւլոզդա, սա իր իրաւունքը տուաւ (յամին 1482) առ Կարոլոս Ա դուքս Սաւոյայ յիտալիա . այս պատճառաւ ասոր յաջորդքը և ժառանգը (որ հիմա թագաւոր կոչուին Իտալիոյ) իրենց իշխանական պատուանուանց մէջ կու համրեն և զանուն թագաւորի Հայոց: — Հաւանական է որ ասոնցմէ աւելի մերձաւոր ժառանգը կամ իրաւատեարք կային ՚ի Կիպրիկիա ՚ի ցեղէ Հեթմեանց և Կոստանդեանց, և թերևս ոմանք փորձած այլ ըլլան իրենց իրաւունքը ցուցնել . այս անտարակոյս է որ շատ իշխանք և պարոնայք զեռ Լևոնէն դար մ՛ետք այլ ազատօրէն իրենց բերդերուն կու տիրէին՝ . ինչուան Սիս մայրաքաղաքն այլ նորոգուելով զրեթէ անոնց ձեռքն էր, և անոնց հետ

այլ պատերազմելով առաւ Տուլզատրցի Շահաւար պէկն ապստամբ ՚ի սուլտանէն Մարայ և Շամայ, յամին 1467 . քսան տարի մը վերջը Օսմանեան սուլտանք տիրեցին մնացեալ բերդերուն և ամուր տեղերուն, բաց ՚ի քանի մը ամուր տեղեաց և հասարակութեանց Հայոց, որոց նոր և յետին դէպքն՝ հիմայ ծանօթ են ամէնուն: Արևմտեայք այլ փորձեցին կերպով մը իրենց խոստմունքը և պարտքը կատարել առ Լևոն . երկու տարի յետ մահուն . Յ . կոմս Նըվերայ (Nevers) և ուրիշ ազատ Գաղղիացիք զօրագնդաւ գնացին յօգնութիւն թագաւորին Մաճառաց, որ կու խոստանար նախ Յունաց օգնելու, և յետոյ Լևոնի երկիրն այլ ազատելու . բայց Նիկոպօլեայ քով (՚ի Բուլղարս) յաղթուելով ՚ի սուլտան Պայէզիտայ (1395, հոկտ. 28), լուեցին ամենայն այդպիսի յոյս և մտածութիւնք:

Քանի մը խօսք այլ Լևոնեան սրոյն վրայ: Այս սուրս շատ տարի չէ որ յայտնուեցաւ կիւլիկիաբնակ Աֆշարներու գլխաւորի մը քով, որ և հայրենական ժառանգութեամբ ստացեր էր, զուցէ իսլամացեալ Հայոց մը սերունդ ըլլալով, ինչպէս ոմանք կ'ըսեն Աֆշարաց համար թէ այդպիսիք են . հիմայ իրմէ ապահով և ազնիւ ազգասէր անձի մը քով պահուի այս ազգային յիշատակս: Չարմանալի, վարպետ և հարուստ շէնք, թէ և հարստութեան մեծագոյն մասն (քարերն) վրայէն վերցուած են . ընտիր պողովատիկ է թուրն . ինչպէս կու տեսնես՝ քիչ մը բոլորած և . զրեթէ կիսէն ՚ի վեր մինչև ՚ի կոթն երեսներն ոսկով բանուած են պալարակապ, պէսպէս արարիկ զարդերով, պատկերներով և հայ արձանագրութեամբք . կոթին ներքեւ քանդակեալ է երկաթազրի ձևով ՇինեԱ. Ի ՔԱՂԱՔՆ Ի Սիս քիւն 1366: Այս թիւն այսպէս նշանուած ոչ միայն տարակուսական, այլ և անհարազատ և օտար է այն ժամանակի կիրառութենէն . բայց չիցուցնէր սրոյն նորու

1 Արդեօք զսա՞ թէ մանաւանդ գնոյն ինքն ըզ Լևոն կ'իմանայ մեր նախ ծանօթութեան մէջ յիշեալ վիպասանն Վիսինեանց՝ ըսելովն, թէ մինչև ցայսօր, (որ է 7 օգոստոսի, 1394, ինն ամիս յետ մահուն Լևոնի), Հայոց թագաւորքն Վիսինեանց նշանները և մտկանունը կրէն:

2 Վերոյիշեալ վիպասանն կ'ըսէ թէ յետ մահուան պայտազատին Գուխոնի՝ իր ազատքն շատ նեղութեանց և սրածութեան տակ ընկան, և ինչուան հիմայ այլ կու աւել. Et sachiés que ses hoirs ont eu depuys moult affaire, comme il appert encores au temps present, et en ont eu moult d'anuys et de pestilence, comme a apparu et encores appert.

թիւնը, այլ հին Հայ թուականին տեղ յետոյ յարմարցուցած. որուն չմտադրելով ոմանք սեպեցին թէ մեր վերջին Լեոնին թագաւորութեան առաջին տարին ըլլալով՝ սուրն այլ անոր ըլլայ. բայց այն թուականին գրութեան պէս անհիմն կ'երևի այդ կարծիքդ այլ. մանաւանդ որ 'ի բուրն կամ բիւն բառին քով Ո գրին և թուին նմանութիւն մը կու նըշմարեմ, որ զսուրը աւելի կու հնացնէ և մեծագոյն Լեոնի մը կ'ընծայեցնէ, որոյ և արժանի է չքեղութեամբն ու վրայի գրուածքովն: — Թուրին կոնական ինչուան երկու երկայնքը՝ ոսկէ գրուագ գրեալ է. Ողորմութեամբ քով սատակեալ Աստուած գրչնաւիս իմ, և կորս զամենայն անեղիս անձիս իմոյ, զի ես ծառայ քո եմ: Իսկ (հոս տեսնուած) երեսին վրայ՝ նախ (վարէն սկսեալ դէպ 'ի կոթն երթալով) կու տեսնես խումբ մը դրօշուց, որոյ վրայ Հայոց թագաւորաց և ազգային նշաններն կան, Գառն Աստուծոյ, Արծուի, Առիւծ, եօթնգլխեան վիշապ, որոց մէջտեղն այլ արքունի գաւազան և թագ, ասոր վրայ այլ խաչ և դաստառական ֆրիստոսի: Ասկէ վար երրորդութեան նշան եռանկիւն մը, կողմերուն մէջ գրած ՀԱՅՐ ԵՒ ՈՐԻԻ ԵՒ ՀՈԳԻՏ ԱՍՏՈՒԾՈՅ: Ասոր ներքե բուրակ մը, մէջը Տիրամայրն բազմեալ Յիսուս 'ի գրկին, եզերքն գրած, ի քեզ Տէր յոռասցայ մի՛ անաչեցից յաշտեալն: Ասկէ այլ վար արաբիկ զարդուց մէջ գրուած Տոռ զօրոշիւն ծառայի քո, կեցո զորսի աղախնոյ քոյ և արս առ իս նշան բարոշեալն: Ասոր ներքե բողորակին մէջ սուրին տէրն՝ թագաւորն՝ գաւազան և խաչ 'ի ձեռին. եզերքն այլ գրուած Ողորմութեամբն Աստուծոյ ԼԵՒՈՆ ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ: Յետոյ դարձեալ սաղմոսի տուն մը Տեւցեալ առեղիք իմ եւ անաչեցեալն, զի դոռ Տէր օգնեցեր ինձ եւ միւրաբարեցեր զիս:

Այս և այսպիսի սրբազան խօսքերով գրուագեալ սուրն՝ արդարև սրբազան և զօրաւոր զէնք մ'եղած է, և ինքնին կու պատմէ զինքը զործածողին վիճա-

կը, չորս դին թշնամիք, ինքն հաստաւ կեցած հաւատքով յԱստուած և 'ի խաչն, աննկուն սրտով ու բազկաւ ընդդէմ աշիրաւաց և ատելեաց Աստուծոյ և մարդկան: Այս սուրը կրնար վերջին Լեոնն այլ ժառանգել կամ մէջքը կապել. բայց նախ և լաւ գործածելու՝ միայն Ռուբինեանց կամ Հայ կիւլիկեցուց առաջին թագաւորին՝ մեծին Լեոնի աջն էր յարմար, որ և անչուշտ իր երկար իշխանութեան ու թագաւորութեան ատեն (1186-1219) շատ ու շատ արեան ու ճարպի մէջ մխեր է այս Հայ հայրենեաց պաշտպան և թշնամեաց վրիժհասն ահեղապանձ գործին:

Հ. Ղ. Վ. Ա.

Մ Ի ՁՍ. Տ

ԺԵ

Ջղային դրոշքիւն և զգայոշքիւն:

Հիմա միջատ մը ներկայացնեմ. ահաւասիկ ջորեակ մը (sauterelle). իրեն արտաքին երևոյթը՝ պատենաւոր եղջերեայ կմախք մ'է չորս թաթերու վրայ յեցած. երկու հատ դիւրաթեք պատեան՝ զոյգ մը թև կը պահպանեն՝ գործիք տեղափոխութեան, և զոյգ մ' ալ երկայն սրունքներ դիւրութիւն մ' են միջատին որ դաշտին երեսը ոստոստելով ժուռ գայ. անոնց վրայ եթէ գրչխուն վրայի եղջիւրակերպ աննկուած բողկուկները աւելցնես, ահաւասիկ կ'ունենաս միջատին արտաքին երևոյթը, այլ անզգայ և անշարժ: Իսկ ներքինը, ներքին գործարանք և դնդերք (Muscles) որ մարմնոյն ներքին խորը բաւ ամենայնի կը գրաւեն, և արին կամ անդարար հեղանիւթ մը, որ անոնց պարապ միջոցներուն մէջ կը քալէ: Ահաւասիկ ներքին և արտաքին միջատ. բայց դեռ ինքը անզգայ և անշարժ է. ոգևորող զսպանակի մը պէտք ունի որ զինքը զրդէ ու շարժէ, ապա թէ ոչ անդամալուծեալ անկենդան էակ մ'է: